ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2018-2020թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (մարտ ամսվա վերջի դրությամբ)













2020թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 3,650.74 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.91%-ով, իսկ 2019 և 2018 թթ.մարտի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 8.24%-ով և 10.42%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3,400.58 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.72%-ով, իսկ 2019 և 2018թթ.մարտի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 9.42%-ով և 12.86%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 250.16 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 6.58%-ով, իսկ 2019 և 2018թթ.մարտի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 5.58%-ով և 14.7%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 7,289.82 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.47%-ով, իսկ 2019 և 2018թթ.մարտի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 5.14%-ով և 5.85%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6,790.29 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.65%-ով, իսկ 2019 և 2018թթ.մարտի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 6.28%-ով և 8.19%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 499.53 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.09%-ով, իսկ 2019 և 2018թթ.մարտի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 8.29%-ով և 18.23%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2,622.42 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.18%-ով, իսկ 2019 և 2018թթ.մարտի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 8.89%-ով և 10.05%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 778.16 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5.56%-ով, իսկ 2019 և 2018թթ.մարտի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 11.24%-ով և 23.51%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 250.16 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 6.58%-ով, իսկ 2019 և 2018թթ.մարտի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 5.58%-ով և 14.7%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5,236.45 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.16%-ով, իսկ 2019 և 2018 թթ.մարտի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 5.77%-ով և 5.49%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 1,553.84 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2019 թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.11%-ով, իսկ 2019 և 2018 թթ.մարտի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 8.05%-ով և 18.39%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 499.53 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.09%-ով, իսկ 2019 և 2018թթ.մարտի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 8.29%-ով և 18.23%-ով:

ԱԺԲԳ













ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2020 թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 4,250.72 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.37%-ով, իսկ 2019 և 2018թթ. մարտի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 3.53%-ով և 3.92%-ով,

2020թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝
1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 75.12%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ավել է 0.27 տոկոսային կետով, իսկ 2019 և 2018թթ.մարտի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 1.73 և 3.01 տոկոսային կետով,
2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 24.14%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 0.26 տոկոսային կետով, իսկ 2019 և 2018թթ.մարտի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 1.8 և 3.16 տոկոսային կետով,
3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.46%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. մարտի 31-ի համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.01, 0.06 և 0.15 տոկոսային կետով:

2020թ. հունվար-մարտին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝
1) տոկոսավճարները կազմել են 37,8 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 2,59 և 3,73 մլրդ դրամով:
2) ներքին տոկոսավճարները կազմել են 13,9 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 3,59 և 3,57 մլրդ դրամով:
3) արտաքին տոկոսավճարները կազմել են 23,89 մլրդ. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1,01 մլրդ դրամով, իսկ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0,15 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ




Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին, մլրդ դրամ




ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




2020թ. հունվար-մարտին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 24,66 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 4,76 և 7,87 մլրդ դրամով կամ 23.92%-ով և 46.88%-ով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 40,85 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 11,93 և 26,59 մլրդ դրամով կամ 41.27% ով և 186.49%-ով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -16,4 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 7,17 և 18,71 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2020թ. հունվար-մարտին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 19,49 մլն. դոլար տոկոսավճար, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 6.54%-ով և 19.76%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 53,28 մլն դոլարի մայր գումար, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 35.73%-ով և 42.41%-ով,

3) ստացվել են 19,05 մլն. դոլարի վարկային միջոցներ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 8.05%-ով և 55.53%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 72,76 մլն. դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 26.45%-ով և 35.55%-ով:

ԱԺԲԳ

## Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ




## Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր




## ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %




## ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման




2020թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 718,23 մլրդ դրամ, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. մարտի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 37.18, 102,3 և 157,49 մլրդ. դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3606 օր, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ պակաս է 127, իսկ 2019 և 2018թթ. մարտի 31-ի նկատմամբ ավել է համապատասխանաբար՝ 428 և 516 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2020թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 4.79%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ, ինչպես նաև 2019 և 2018 թվականների մարտի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար 0.03, 0.26 և 0.08 տոկոսային կետերով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2020թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 0.63%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0,106 տոկոսային կետով, իսկ 2019թ. և 2018թ.մարտի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0,24 և 0,14 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 7,17%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ մեծ է 0.31 տոկոսային կետով, իսկ 2019 և 2018թթ. մարտի 31-ի համեմատությամբ փոքր է համապասատխանաբար՝ 0.94 և 1.37 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 92.2%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, փոքր է 0.2 տոկոսային կետով, իսկ 2019 և 2018թթ . մարտի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 1.18 և 1.52 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ
## ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020 -2022ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (մարտ ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի




Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %




ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %




ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %




ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2020-2022թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2020թ. մարտի 31-ի դրությամբ կազմել 8.92 տարի: Այս ցուցանիշը 2019թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից ավել է 0.44 տարով, իսկ 2018թ. արձանագրված ցուցանիշից պակաս է 0.09 տարով,

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2020թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 13.63%, որը 2019թ. և 2018թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակից մեծ է համապատասխանաբար՝ 1.62 և 1.89 տոկոսային կետով,

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2020թ. մարտի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.68%, լողացող տոկոսադրույքով՝ 16.32%: Ընդ որում, 2020թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2019թ. և 2018թթ. մարտի 31-ի համապատասխան ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար՝ 1.23 և 2.82 տոկոսային կետերով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 20%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2020թ. մարտի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 77.12%, ներքին պարտք՝ 22.88%: Ընդ որում, 2020թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2019 և 2018 թթ. մարտի 31-ի համապատասխան ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 0.38 և 1.97 տոկոսային կետերով: